«Այս է Տապան Առաքելին թվին ՊԺԲ։1363։»
«Այս է Հանգիստ Տէր Սիմէոնին ՇՃԸ։ 1059։»
«Այս է Հանգիստ Հասանին, Մկրտիչ աբեղային։»
Այս է Հանգիստ Խուդաբաշին, թվ. ՌՃԿԱ.ին։
1711։»

«Այսոքիկ տապանագիրքք վկայեն անժխտելի թէ նախ քան զհինգ հարիւր ամն գտանէին աստանօր բազմութիւնք Հայոց։

«Ողբ շարունակ կարգաւ կացին աստ ցաւուրս ԶուլՕվայ զօրավարին Ռուսաց, և ապա գաղթեալ աստէն գնացին ի Ռուսաստան, և բնակեցան ի Մաճառ"։

---

Իսկ ես 1889 թուին հոկտեմբերին, Դարբանդ քաղաքը գնացած լինելով առաջնորդական պաշտամամբ, այն տեղից՝ տեղւոյն Աբրահամ քահանայի և երեսփոխան պարոն Սարգիս Շահիջանեանցի և ուրիշ մի քանի մարդկանց հետ գնացինք սուրբ Գրիգորիսի նահատակութեան տեղը տեսնելու և համբուրելու[1]. և երբ հասանք մատուռի դուռը և համբուրեցինք, հրաւիրեց մեզ իւր մօտ հիւր գաւառապետն այն գաւառի ազնիւ և պատուական պարոն Յովհաննէս Մովսէսեան Աստուածատուրեանց Երեւանցի (Իւան Մօսէյիչ) և պարկեշտուհի ամուսին նորա ազնիւ Տիկին Հռիփսիմէն՝ դուստր Դարբանտեցի եկեղեցաշէն բարեպաշտութեամբ հռչակուած հանգուցեալ պարոն Սարգսի Ստեփաննոսեան Կաճկաճեանցի, որք քանի օր յառաջ մեր ուխտ գնալոյ ցանկութիւնը լսելով՝ եկել էին ուխտատեղը և պատրաստութիւն էին տեսել դիւղի թուրք տանուտէրի տանը, և մինով հասած լինելոյ պատճառաւ՝ թողինք ուխտա-

---

[1]Սուրբ Գրիգորիսի նշխարքը յայտնուեց յամին 489. և մեր ժամանակը յամին 1855։ Ամարասի վանքի նորոգութեան առթիւ։